ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2024 թվականի N 1221-Ա

ՆԱՐԻՆԵ ԼԵՎՈՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ՌՈՒԶԱՆՆԱ ԵՎ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 109 շենքի 7 բնակարանի բնակչուհի Նարինե Լևոնի Կարապետյանի՝ Արմավիրի համայնքապետարան մուտքագրված 2024 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 5371 դիմումը և Արմավիր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 15 նիստի արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Թույլատրել Նարինե Լևոնի Կարապետյանին /ծնված 20.10.1989թ./ օտարելու իր անչափահաս երեխաներ Ռուզաննա /ծնված 29.12.2007թ./ և Սյուզաննա /ծնված 10.03.2009թ./ Սերյոժայի Խաչատրյաններին, համաձայն ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի (04.03.2015թ. ժառանգական գործ 434), համասեփականության իրավունքով հասանելիք Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 109 շենքի 7 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը:

2.Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 25
ք. Արմավիր